

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԶԱՆՖԻԴԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ

2014 թվականի ընթացքում ստացվել են 147 դիմում բողոքներ: Քննարկվել են բոլոր դիմում բողոքները և տրվել են պատասխաններ: Քաղաքացիների ընդունելությունների թիվը կազմում է 178 մարդ:

Ստացվել են 108 պաշտոնական գրություններ, որոնք քննարկվել և տրվել են պատասխաններ:

Նախապատրաստվել և տարբեր կազմակերպություններին են ուղարկվել 227 պաշտոնական գրություններ:

Անցկացվել է ավագանու 12 նիստ, որոնք արձանագրվել և վավերացվել են ավագանու անդամների կողմից:

2014 թվականի ընթացքում համայնքի ղեկավարի կողմից արձակվել է 18 կարգադրություն և ընդունվել 93 որոշում:

Համայնքի անդամների 147 դիմում բողոքների հիման վրա կատարվել է 34

հողամասերի չափազորման և սահմանների ճշտման աշխատանքներ, 25 դիմումներ՝ պտղատու և խաղողի այգիների հիմնման աշխատանքների ակտավորման գործընթացի համար, իսկ մնացած 88 դիմումները քննարկվել և տրվել է կոնկրետ պատասխաններ:

Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել և անցկացվել է երիտասարդական, հայրենասիրական և այլ տեսակի միջոցառումներ:

Փետրվարի սկզբին գյուղապետարանի շենքում կազմակերպվել և անցկացվել է շախմատի ավանդական մրցաշար՝ նվիրված Արցախյան ազատամարտին նվիրված Զանֆիդայի զոհված ազատամարտիկների հիշատակին:

Մրցաշարում հաղթող 4 շախմատիստներ պարգևատրվել են նվերներով, իսկ 11 զոհված ազատամարտիկների հարազատներին՝ նվերներ և դրամական պարգևներ, որից հետո զոհված ազատամարտիկների հիշատակին տրվել է ճաշկերույթ: Կանանց միջազգային օրվա՝ մարտի 8-ի կապակցությամբ կազմակերպվել է միջոցառում՝ դպրոցի, առողջության կենտրոնի և գյուղապետարանի շուրջ 75 կանանց տրվել են ծաղիկներ և նվերներ:

Մայիսի 9-ին կազմակերպվել է միջոցառում նվիրված Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի օրվան, որի ժամանակ ծաղկեպսակներ և թարմ ծաղիկներ են դրվել զոհված մարտիկների հուշարձանին, իսկ պատերազմի վետերաններին տրվել են դրամական պարգևներ:

Մայիսի 28-ին ռուսական սահմանապահ զորքերի օրվան նվիրված տոնակատարության համար նվերներ են տրվել ուղեկալի անձնակազմին:

Ամիսը 2 անգամ կատարվում է փողոցների աղբահանություն գյուղապետարանի միջոցների հաշվին:

Կատարվել են խմելու ջրի վարակազերծում և ժամանակին կատարվում է ջրամատակարարման աշխատանքները / ձմռան ամիսներին օրական 2 անգամ 2-3 ժամ, իսկ մնացած ամիսներին օրական 2 անգամ 4-6 ժամ/:

Կատարվել են համայնքի փողոցների և դաշտամիջյան ճանապարհների վերանորոգման և ավագապատման աշխատանքներ:

Ներկրվել և համայնքի հող օգտագործողներին է տրվել 130.0 տոննա ազոտական պարատանյութեր:

Համայնքում գործում են 1 միջնակարգ դպրոց, 1 առողջության կենտրոն և 1 մանկապարտեզ:

Առողջության կենտրոնում գրանցված բնակչության թիվը կազմում է 2962 բնակիչ:
 Հաճախումների թիվը կազմել է 3739 մարդ, որից մեծեր՝ 2263, փոքրեր՝ 1479:
 Գրանցվել է 303 տնային կանչեր, որից մեծեր՝ 206, իսկ փոքրեր՝ 97:
 Պրոֆիլակտիկ նպատակով սպասարկվել է 1428 մարդ, որից մեծեր՝ 1058, միջին
 դպրոցահասակներ՝ 370:
 Նեղ մասնագետների կոնսուլտացիա ստացել են 507 հիվանդներ:
 Առողջության կենտրոնը գործում է որպես ընտանեկան, որտեղ իրականացվում է
 ընտանեկան բժշկություն:
 «Վազգեն Սարգսյանի» անվան մանկապարտեզը գործում է ապրիլի 1-ից մինչև
 հոկտեմբերի 31-ը 3 խմբով, հաճախում ցուցակային 82 երեխա:
 Կազմվել է նախագիծ 2013 թվականին Ջանֆիդա գյուղը 100 տոկոսով
 գազաֆիկացնելու համար:

Եկամուտները 2014 թվականի

1. Հողի հարկի - 8884.8 հազ դրամ 100 %
2. Գույքահարկ - 6353.3 հազ. դրամ 100 %
3. Դոտացիա -40952.4 հազ. դրամ 100 %
4. Կապիտալ գործառնություն /հողի օտարում/ 5723.2 հազ. դրամ, որը կազմում է 50 %

Ընդամենը - 56955.5 հազ. դրամ, բյուջեն կատարվել է 99.3 %

Ծախսեր

1. Աշխատավարձ - 19811.6 հազ. դրամ
2. Սուբսիդիա - 12000.0 հազ. դրամ
3. Սոց օգնություն - 6305.0 հազ դրամ
4. Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում - 4495.6 հազ. դրամ
5. կապիտալ կառուցում և վերանորոգում - 2529.0 հազ. դրամ

Համայնքի առջև ծառայած հիմնական խնդիրները:

1. Կուլտուրայի տան հիմնանորոգում
2. Սանկապարտեզի շենքի հիմնանորոգում և գազաֆիկացում
3. Խմելու ջրագծերի խողովակաշարերի վերանորոգում
4. Գազաֆիկացում / շարունակական /
5. Գյուղամիջյան ճանապարհների ասֆալտապատում և ավազապատում

Ջանֆիդա համայնքի ղեկավար՝



Եղիազարյան

12.01.2015 թվական
 Ջանֆիդա